

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր ժողովրդի սնոտիահաւատութիւնը. — Ո՞վ է մեղաւորը. — Երկրաշարժի հիմնական պատճառը. — Նախազգուշական մէջոցների նշանակութիւնը. — Քյիշկների VIII Պիրօզօվեան համաժողովից մի քանի տեղեկութիւններ. — Խնքնավարութեան զերը ժողովրդի կեանքում. — Գոքրիկ ինքնավարական սազմեր՝ ծուխ, հոգաբարձութիւն. — Ժողովրդի ինքնավար իրաւունքների պաշտպանութիւնը մեղանում. — † Ատ. Խզբաշեան. — Ըէլլիստների մուտքը Խժշկական ակադէմիա. — Լուսաւորութեան մինիստրի հրամանը Խոսկոսայի համալսարանի ուսանողական անկարգութիւնների առիթով.

Յունուարի 31-ին տեղի ունեցած երկրաշարժը զգացուեց Անդրկովկասի ամբողջ արեւելեան մասում. Թիֆլիս, Բագու, Դերբենդ, Շուշի—ահա այդ չարժի շրջանագիծը որոշող կէտեր, եթէ կենտրոնը համարենք Շամախին:

Այս համարի «Փաւառական» բաժնում ընթերցողը կը ծառաթանայ բնութեան հասցրած այդ վնասների մանրամասնութիւնների հետ, որոնք անշուշտ արդէն յայտնի են լրագրներից. մենք կը ցանկայինք այսուեղ միայն կանգ անսել մեր ժողովրդի երկու բայցառական առանձնայատկութիւնների վրայ, որոնք անգամ որոշ կերպով արտայայտուեցին բնական արհաւերքի դիմաց. Այդ առանձնայատկութիւններն են՝ մնոտիտպաշտութիւնը և փատակումը:

Ժողովրդի մէջ պատող անհեթեթ մնոտիտպաշտութիւնների մասին զաղափար են տալիս «Խօօօ Օօօթինի» լրագրում բերուած մի քանի նմուշները. Խսկապէս զարմանալու ոչինչ չը կայ, եթէ սարսափահար եղած ժողովուրդը, չունենալով ծիշտ զիառութիւնից ոչ մի տեղեկութիւն, իր խաւար ուղեղում և անսանձ երեւակայութեան մէջ աշխատում է զերբնական բացարութիւններ գտնել երկրի անթափանցելի խորքերում, սահգարամնտում, կատարուած երեւոյթների համար. Ժողովուրդը մեղաւոր չէ, եթէ նա անմաս է Ցմացել քաղաքակրթութեան

ամենամեծ բարիքից՝ լուսաւորութիւնից։ Մաղրի արժանի են այն բոլոր մարդիկ, որոնք արդարացի և բնական են համարում որ համամարդկային բարիքից—լուսաւորութիւնից—օգտում են միմիայն մի խումբ առանձնաշնորհեալներ։ Դատավինտութեան արժանի են այն հանդամանքները, որոնք արգելք են եղել գիտութեան ճառագայթների առաջ և ազատ թափանցման ազգաբակութեան բոլոր խաւերի մէջ։ Խոկ այժմ դպրոցազուրկ, անգրադէտ մասսայից ինչ էք պահանջում։ Միթէ նա է մեզաւորը։

Մարդուս առողջ դատողութիւնը,—խոկ այդ յատկութիւնը ժողովրդի մարդու, մի Սանիօ-Պանչօի մէջ, յաճախ աւելի է զարդացած, քան շատ ինտելիգէնտների մէջ,—երբէք աւելի հասկանալի, խելքին աւելի մօտ բացատրութիւնը թողած չի ընկնիլ անհեթեռութիւնների յետեւից, ինչու, օրինակ, այժմ էլ հիւանդութիւնը այլ ևս չեն բացատրում դեւերի, չար ոզիների գործունէութեամբ։ Որովհետեւ աւելի պարզ, աւելի հասկանալի զիտական բացատրութիւնները բաւականաչափ ընդհանրացած են ժողովրդի զիտակացութեան մէջ։ Նոյնը կը լինի նաև ամեն մի բնական երեւոյթի նկատմամբ, եթէ զիտական բացատրութիւնները աարածուեն ժողովրդի մէջ։ Ոչ ոք չի սկսիլ «երկնային նախազգուշացումով», «Ալլահի բարկութեամբ» և այլ գերբնական միջամտութիւններով մնինել, օրինակ, աւենդը, դողոցը, երբ մի չնչին փաշի, քինինը, զօրութիւն ունի ամոքել «երկնային զասումները... երկրագնտի դողոցի կամ սասանումների ժամանակ էլ հանդիսա կը թողնեն Ալլահին էլ, ճակատագիրն էլ, եթէ տգէտ մարգկանց յայտնի լինեն այդ երեւոյթների բնական պատճառները։

Բարերախտաբար զիտութիւնը միանդամայն անգէտ չէ երկրաշարժների հարցում, ուստի «զիտութեան մնանկութեան» մասին չարաբինդաց ակնարկները պէտք է զուր կորչեն.,, ի հարկէ, զիտութիւնը չի քաշւում առաջուց յայտնել որ նա միայն հաւանական և ճշմարտութեան շատ մօտ է համարում իր տուած բացատրութիւնները և նա միաժամանակ չի գաղարում նորանոր հետազօտութիւններով աւելի ևս պարզել զեռ մութ մնացած կէտերը, բայց և այնպէս այն՝ ինչ որ իմացել է մարդկային միաբը ընութեան այդ գաղանիքից, բոլորովին բաւական է չանհանզստացնելու համար «երկնային» անյայտ զօրութիւնները...»

Աշխատենք ընդհանուր սխեմատիկ գաղափար տալ գիտութեան տուած բացատրութեան մասին։

Մեր երկիրը մի քանի տասնեակ միլիօն տարիներ տառած

պոկուելով իր մայր-ծնող արեգակից, մի հրագունդ էր, ամրող-ջապէս հալուած նիւթերի մի զանգուած: Պտակով մայր-ծնողի շուրջ, մանուկ երկրագունդը կամաց-կամաց սկսեց սառչել, իր տաքութիւնը ճառագայթելով անհուն տարածութեան մէջ: Այդպիսով միշտաստեղային սառն տարածութեան մէջ դարերի ընթացքում այնքան առաջ գնաց երկրի պաղումը, մինչև որ նրա մակերեւոյթը սառչելով ծածկուեց քարային կեղեւով: Այդ հողային կեղեւը քանի գնում հաստանում էր, որովհետեւ աւելի և աւելի էր սառչում երկրագունդը: Բայց յայտնի է որ տաք մարմինները պաղելով սեղմուում են և աւելի փոքր ծաւալ ստանում: ուրեմն, սառած կեղեւի տակ գտնուող երկրի տաք միջուկը պաղելով պէտք է աստիճանաբար փարրանայ իր ծաւալով: Արդ, գծուար չէ երեւակայել թէ ինչ պէտք է լինի երկրի քարացած կեղեւի հետ, երբ նրա տակ գանցուող կենտրոնական զանգուածը կծկուի, սեղմուի: Ի հարկէ, կեղեւն ևս պէտք է յարմարուի այդ կծկումներին: իսկ ինչ հետեւանքներ պէտք է ունենայ քարային հաստ կեղեւի այդ կծկումը: անշուշտ պէտք է երկրի մակերեւոյթի վրայ առաջանան ծագեր, կնճիռներ, երկրի վիթխարի շերտերը տեղ-տեղ պէտք է ձեղքուեն, առաջացնելով սոսկալի պայթումներ, որոնց արձագանքը պէտք է համար կեղեւի մակերեւոյթի վրայ ապրողներիս իբրև ստորերկրեայ հարուածներ և որոստումներ...

Երկրի կեղեւ ամեն տեղ, ի հարկէ, միենոյն հաստութիւնը, միենոյն տաքութիւնը և հանքային կազմութիւնը չունի: ծովերի, սվկանոսների եղերքներում հաւանական են աւելի անկայուն շերտեր: այդ է պատճառը որ պառաւող երկրի երեսին կնճիռներ կամ լուսաշղթաներ են զարդանում որոշ գծերով: Երբ երկրի կեղեւի ձեղքուածքները խոր են լինում՝ այդ պատուածքներից դուրս են ժայթքում լաւայի նման երկրի խորքերում ճնշուած տաք զանգուածները և մենք ստանում ենք հրաբույժներ, ինչպէս տեղի ունեցաւ այդ և Շամախու երկրաշարժի ժամանակ:

Այսպէս, ուրեմն, երկրաշարժի հիմնական պատճառը երկրի աստիճանաբար պաղելն է, որից նրա կենտրոնական մասսան կծկուում է և առաջացնում վերենի ամուր շերտերում զանազան յեղարջումներ:

Աւելի սակաւ է տարածուած երկրաշարժը մի այլ պատճառից: Երբեմն երկրի խորքերում ստորերկրեայ ջրերի ջրջանառութիւնից գոյանում են լուծուած հանգերի տեղերում խոռոչներ, քարանձաններ, որոնց վլումից ես կարող են առաջանալ ցնցումներ, երկրաշարժ: Բայց այդ պատճառից առաջացող եր-

Կրաշարժները երբէք մնծ ծառալ չեն ստանում: Աւելի տարածուած և երկրագնդի կեանքի մշտական մի պրօցեսս է այն ցնցումը, որ առաջանում է մեր մոլորակի աստիճանական պազումից: Երկրաբանները առանձին գործիքներով (սէյսմօմենտը) միշտ դիտելով երկրի տատանումները հաստատում են, որ ամեն օր, առնեն ժամ նկատում են երկրի զանազան մասերում թեթև տատանումներ, իսկ մարդիկ ուշադրութիւն են դարձնում մխայն արտակարգ ցնցումների վրայ Այսպէս, օրինակ, մեր մարմինի ասքութիւնը ևս օրուայ ընթացքում տատանումների է ենթարկում, սակայն մնաք ուշադրութիւն ենք դարձնում մեր մորմինի ասքութիւնն վրայ միայն այն ժամանակ, երբ նրա տատանումները արտակարգ են դառնում:

Մեր նպատակից դուրս է աւելի մանրամասն խօսել երկրաշարժների մասին, մենք միայն ուղում էինք ցոյց տալ, որ գիտութիւնը երբէք մտադիր չէ զինաթափ լինել նոյն իսկ ամենաանեղ երիտոյթների առաջ: Ուսումնասիրելով երևոյթը, նա իր յօյը չի կարցնում՝ ժամանակով համեմ այնպիսի կատարելութեան, որ մօտալուա աղէտի գուշակումը հնարաւոր դաւնայ: Աւելին կ'ասենք, զիտութիւնը կարող է սովորեցնել մարդկանց՝ այնպիսի նիւթերից և այն ձեռվ տներ կառուցանել, որ ամենամեծ ցնցումներին անդամ զոհերի թիւը չնչին լինի:

Ինչու խօսեան և ժանտախուը այժմ չեն համարձակւում տուալուայ նման արշաւանքներ կատարել Երոպայում:—Որովհետեւ մարդը այլ ևս երկնքի պատուհաս չի համարում համաճակները և լաց ու կոծի, աղօթքի փոխարէն գործադրում է զեզմնիքների, բժշկական միջոցներ. որովհետեւ ասնիտարական, նախազգուշական միջոցներ է ձեռք առնում: Միթէ դժուար էր երկրաշարժի դէպքումն էլ որ եղած փորձերից խրատուելով մեր շամախեցիները, փոխանակ ճակատագրի վրայ յօյս զնելու, մի կողմ թողնէին ամթաղան-բարաղան մնացած սովորութիւնը՝ քար ու ցեխից խարխու տներ շինելը, և սովորէին փայտ ու երկաթից, մասնագէտների ցուցմունքների համեմատ, աներ կառուցանել:

Այդ մասնագէտներին՝ ճարտարապետներին և լինժենէրներին՝ մնում է մի քիչ էլ ժողովրդի մասին մտածել. դրանք իրանց մասնագիտութիւնը մինչև այժմ գործադրում էին միմիւյն յօդուած կապիտալիստների: Այդ կողմից մեր տեխնիկները մի առանձնացած դիրք են գրաւել միւս մասնագէտների համեմութեամբ: Մենք սովոր ենք լսել ժողովրդին՝ բժշկական, իրաւարանական, զիւղատնտեսական, կրթական օգնութիւն մա-

տակարաբելու մասին, իսկ երբէք՝ «տեխնիկական օգնութիւն» հասցնելու մասին կեանքը այժմ այդ պահանջն էլ է զնուամ ինտելիգէնցիայի առաջ, սովորեցրէք, ինժինէր պարոններ, թէ մեր գիւղացին և քաղաքացին, երկրաշարժների ևնթարկուած շրջաններում, ինչ նիւթերից և ինչ ձեփ տներ շննեն:

Եւ հասարակութեան համար էլ աւելի ձեռնաու է ըստ կարելոյն գործել այդ ուղղութեամբ և նախազգուշական միջոցներով աղջտների առաջն առնել, քան ամեն անզամ օգնութեան ձեռք մնենել այն ժամանակ, երբ բանը բանից անցել է և զոհերի ու թշուառացածների թիւը սոսկալի չափերի է հասել:

Այդ նախազգուշական եղանակը վազուց զնանատել է բժշկութիւնը. նա աւելի խելացի է համարում վազօրօք սանիտարական, առողջապահական միջոցներ գործադրել հիւանդութիւնների առաջն առնելու նպատակով, քան սպասել որ հիւանդութիւնը սկսուի և ապա միայն հարերի և միջամտուրների ոյժը փորձել...

Թէ ինչ ահազին նշանակութիւն ունեն բժշկական նախազգուշական միջոցները ազգերի կեանքում, այդ երեսում է նրանից որ, մինչդեռ Արեմտեան Եւրոպայում, օրինակ, Շվեյցարիայում և Նորվեգիայում մահացումների թիւը  $16^{1/2}/0$  է առ հազարն, Ռուսաստանում  $36^{0}/0$  է: Իսկ մի ժամանակ Շվեյցարիայում և Նորվեգիայում էլ մահացուների տոկոսը ահազին երբայց չնորհիւ գործ դրած սանիտարական միջոցների և ազգաբնակութեան կուլտուրական մակերեսոյթի ընդհանուր բարձրացւման, այժմ ահա այդպիսի մեծ տարրերութիւն կայ երկու հարեան երկրների մէջ:

Թէ ինչ ողորմելի զրութեան մէջ է Ռուսաստանում ժողովրդի առողջապահական զրութիւնը, այդ պարզ երեաց յունուարի սկզբում Մոսկուայում կայացած «Բժիշկների VІI Պիրօգօվեան համաժողովում» կարգացած մի շարք զեկուցումներից: Սոսկալի է մանաւանդ մանուկների կոսորտածը: Ինչպէս ցոյց տուեց բժիշկ Դոլժենկով, մինչդեռ Նորվեգիայում 1000 նորածիններից մինչև մի տարեկան հասակը մնանում են 96 հոգի, Ռուսաստանում 6—7 անգամ աւելի է այդ թիւը: Եւ այդպիսով Ռուսաստանը իւրաքանչիւր տարի թաղում է  $1^{1/2}$  միլիօն մանուկներ: Դրա, ինչպէս և ամեն մի հասարակական չարիքի գէմ մաքասելու համար՝ անհրաժեշտ է, ի հարկէ, ի միջի այլոց, գործունէութեան ազատութիւն: Այդ ապացուցւում է ոչ միայն Արեմտեան Եւրոպայի օրինակով, այլ և Ռուսաստանի, ուր զեմստվական նահանգների ժողովրդի զրութիւնը անհա-

մեմատ աւելի լաւն է ոչ-զեմստվականներից, իսկ տեղական ինքնավարութիւնից (զեմստվա) գեռ զուրկ են 55 նահանգներ մոտ 62 միլիոն ազգաբնակութեամբ։

Հետաքրքրական էին և պրօֆէսօր Կապուստինի բերած թուերը Ռուսաստանի բժիշկների մասին։ 1899 թուականի վիճակագրութիւնամբ Ռուսաստանի 12,482 բժիշկներից քաղաքներում առորում էին՝ 9,422 հոգի և միայն 3,060 հոգի զիւղերում, ի հարկէ, զիւսաւորապէս զեմստվական նահանգների զիւղերում։ Քաղաքում մի բժշկին ընկնում է միջին թուով 1,700 մարդ, իսկ զիւղերում 36,000 մարդ։ Քաղաքային բժիշկը միջին թուով օրեկան ընդունում է 4 հոգի, իսկ զիւղականը 98 հոգի եթէ ամեն մի հիւանդի վրայ գործ դնել  $\frac{1}{4}$  ժամ, զիւղական բժիշկը պէտք է աշխատէ օրը 24 ժամ... Գիւղերի համար հարկաւոր են գեռ 62,000 բժիշկ, որպէս զի բժշկական օգնութեան կողմից զիւղերը հաւասարուեն քաղաքացիներին։ Այդքան «անձնապոհ» մարդիկ որտեղից գանել, եթէ չը ստեղծել պայմաններ զիւղերում բժշկութիւն աննելու համար։ Իսկ որն է այն ոյժը, որ լուծի այդ հարցը, եթէ ոչ տեղական լայն ինքնավարութիւնը, որ ժողովրդի կեանքի ամեն կողմների համար մի կատարեալ բարիք է։

Այդպիսի ինքնավարական բարկերից օրէնքով դուրի չէ հայ ժողովուրդը իր ներքին մի քանի հարցերում։ ծուխը եկեղեցական-ազգային ինդիբներում կատարելապէս մի ինքնավար մարմին է ճանաչուած գեռ Պօլօժէնիայով։ Բայց արիք աեսէք թէ ինչ հնարներ են գործ դնում մեր «ժողովրդասէր» կղերականները ժողովրդից կողոպատելու համար նրա այդ փոքրիկ բարիքն անդամն կոնսիստորիաններում նատած անզրագէտ աէրաէրներ և իշխանասիրական տենչով կուրացած շաստուածարանները ամենազդուելի կամայականութիւնամբ ձգտում են կրծատել, ոչնչացնել, անուանական գարձնել ժողովրդի ինքնավարական իրաւունքները։ Դիրախտարար այդ վայրենի բռութիւնների գէմ մաքառելու համար ժողովուրդը շատ քիչ հասկացող պարագլուխուներ ունի։ Այդ է պատճառը որ առանձին երախտազիտութեան արժանի են այն սակաւաթիւ անհատները, որոնք ընդհանուր անտարերութեան, սարկական համակերպումների ժամանակ՝ չեն լքանում և, յենուելով օրէնքի վրայ, մաքառում են կղերական ոտնձութիւնների և փաշայականութեան գէմ։

Ժողովրդի իրաւոնքների այդպիսի համոզուած պաշտոպաններից մէկն էլ թիֆլոսում վետրուարի 8-ին վախճանուած, շուշնչութիւններին քաջ յայտնի փաստարան Ստեփան իւղաշեանն էր, իրքն Շուշուայ թեմական դպրոցի հոգաբարձու-

նա երկար ժամանակ մաքառել է տիրահոչակ Կարապետ եպիսկոպոս Այվազեանի և դրա շաւզով ընթացող յաջորդների քմահաճ և միանգամայն ապօրէն արարքների դէմ, աշխատել է խլել դպրոցի հարուստ կալուածները աւագակարարոյ կղերի ձեռքից, պաշտպանել է դպրոցի կանոնադրութեամբ հոգարարածութեան յատկաբրած իրաւոնքները, և, տեսնելով որ այնա ոչինչ չի կարողանում անել տիրող կղերական ընծիմի դէմ—գերադասել է հրաժարուել ժողովրդի ներկայացուցչութիւնից, քան միալ և կօմպրօմիաներով փանառել այդ իրաւոնքը մի սուպէ ճաշի դնով... Հարց է. կօմպրօմիս անող մեր երեսլի «փոլիմիկոսները» ինչ շահեցին վերջ ի վերջոյ...

## ԼԵՒՈՆ ՍԱՄԴԱՆԱՆ

## Թէալիսների մուտքը Բժշկական ակադէմիա.

Թագաւոր Կայորը, ժողովրդական լուսաւորութեան մինիստրի ամենահպատակ զեկուցման համեմատ, Բարձրագոյն բարեհաճեց, որ թոյլ տրուի, որպէս փորձ, հինդ տարի ժամանակով, Կայսերական զինուորական բժշկական ակադէմիայում ընդունել, զիմնազիաներում ուսումն աւարտողների հետ հաւասար իրաւոնքներով, բէալական հօթ դասարանն աւարտած երիտասարդներին, եթէ նրանք, ակադէմիան մանելու ժամանակ, կամ ակադէմիայում լինելու առաջին տարին, լատիներէն լեզուից լրացուցիչ քննութիւն կը տան զիմնազիական չորս դասարանի դասընթացքի ծաւալով:

Լուսաւորութեան մինիստրի հրամանը Մոսկուայի համալսարանի ուսանողական անկարգութիւնների առիրով.

Հրատարակուած է ժողովրդական լուսաւորութեան մինիստրի հրամանը. «Փեարուարի թ-ին առաւոտեան Մոսկուայի համալսարանի բաղում սկսեցին հաւաքուել այս համալսարանի ուսանողները, որոնց մէջ կային կանայք և մայրաքաղաքի ուրիշ բարձրագոյն դպրոցների ուսանողները: Անյարմար համարելով թողնել ուսանողներին բազում, համալսարանի բէկտօրը թոյլ տուեց նրանց մանել ակտի դահլիճ և այնտեղից ցրուել տները: Ամբոխը, բաղկացած աւելի քան 400 հոգուց, դահլիճից ներս խուժեց համալսարանական միւս բնակարանները, և այդ ժա-